№ 222 ԿԻՐԱԿԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 222

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
1912–1913 թ. սեզօնի բացում
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ—Շիրվանզադէի
ԿՈՐԾԱՆՎԱԾԸ
Դրամա 4 արարուածով։
Մասնակցում են. տ. տ. Արմէնեան, Արուսեակ, Գուլազեան, Զարէլ, Ցամրիկ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Բերոյեան, Լաքա, Ղազարեան, Մանուէլեան, Յարութիւնեան և Տէր-Առաքելեան։
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները—3 ռուբլուց մինչև 25 կոպ.։ Օթեակները—լոժեր՝ 10 ռ. 30 կ., բենուար՝ 5 ռ. և բելետաժ՝ 4 ռուբլի։
Տոմսակների գնից զիջում ունենալու են միմիայն Հայոց Դրամատ. Ընկերութեան անդամները և աշակերտները։
ԱԶԴ.—Երկուշաբթի, հոկտեմբերի 15 ին «ԷԴԻՊ ԱՐՔԱՅ»—յայտնի ողբերգութիւն Սոֆոկլի, ամբողջ խմբի մասնակցութեամբ։
Ռեժիսսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
առ. 745. 3—3

РУССКОЕ ОБЩЕСТВО ПАРОХОДСТВА и ТОРГОВЛИ
Ռուսաց Շոգենաւային եւ Առեւտրական Ընկերութիւնը
սրանով յայտարարում է, որ ԱՄՍԻՍ 5-ԻՑ, ՈՒՐԲԱԹ, Թիֆլիսի գրասենեակը
ՏԵՂԱՓՈԽՎԱԾ Է
Սօլօլակսկայա փողոց, № 8, ՕՏՏԷՆԻ ԴԵՂԱՏԱՆ վերև, ՎՈԼԺՍԿԻ-ԿԱՄՍԿԻ ԲԱՆԿԻ դիմաց։
Գրասենեակը բաց է առաւօտեան ժամը 9—3-ը։ ◆ Հեռախօս № 11.
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(ա.օ.) առ. 742. 4—4

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
(Ն. Կ.) 291. 50—44

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի
Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բեռլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրօֆ. Պօզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։
Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.
(Չ.ու.կ.) առ. 675. 30—12

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։ (երեկ. ժ. 5—7-ը։
Միխայլովսկի պր. 86, տէլէֆ. № 576.
(Ե.Ն.Կ.) առ. 179. 100—40

Պահանջեցէք ամենուրեք!
ԲՈՒՖԷՏԸ
Ար. և Ա. Մ.
ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
„ՆԱՐԶԱՆ" Սեղանատան „ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20."
ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19, ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՈՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, д. Гургенова, №№ 8—10. Тел. 898.
Գլխաւոր պահեստը Վարչութեան կից՝ Պեատիգօրսկում։ Պրէյս-կուրանտները ձրի։
Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(Կ.) առ. 224. 39—27

„ՆԱԽՇԻՐԱ" ԸՆԿԵՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն ՎԱՌԵԼԱՅԻՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՏԷՐԵՐԻՆ և ՔԱՐԱԾՈՒԽ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ, Թիֆլիսում, որ Տկվիբուլի քարածուխի մենավաճառային պայմանագրի ժամանակը Ընկերութեան կօնտրագէնտի հետ վերջացված լինելու պատճառով, վագօններով տրվող պատուէրները ցանկացողներից կանխապէս ընդունվում են Ընկերութեան վարչութեան մէջ, Սօլօլակսկայա № 14 տանը։
(Չ. Կ.) առ. 750. 3—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
նշանակված է կիրակի, հոկտեմբերի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին (Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. դահլիճում, Արաս Արագօվսկայա հրապ. № 7)։ Ժողովի օրակարգն է՝ Արգվինում Ընկ. ճիւղ բաց անելը, պաշտօնավար անձանց լրացուցիչ ընտրութիւնները և հերթական խնդիրներ։
(Կ.) առ. 752. 2—1

Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան
Առաջին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ նշանակված է
հոկտեմբերի 10-ին, երեկոյեան ժամը 7½-ին, Քաղաքային Դումայի դահլիճում, ընտրելու վարչութեան 8 անդամ, որոնցից մէկը գանձապահ, 3 անձնափոխանորդ, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամ և 2 անձնափոխանորդ։ Անդամներին ուղարկված է և առանձին-առանձին հրաւէր։ Նոր անդամ կարող են գրվել ժողովի ժամանակ դահլիճ մտնելիս։
առ. 754. 1—1

Տասն տարուց ի վեր կազմում եմ
Հայկական Արձանագրութիւնների Ժողովածու
CORPUS INSCRIPTIORUM ARMENICARUM
Զարդարված արձանագրութիւնների բազմաթիւ լուսանկարներով։
Ուստի խնդրում եմ ուղարկել ինձ արձանագրութիւնների լուսանկարներ, որոնց արժէքը ըստ պահանջման կը հատուցանեմ, կամ փոխարէնը լուսանկարներ կը տամ իմ կազմած ալբոմներից։
Երուանդ Լալայեան
Հասցէս. Тифлисъ, Лермонтовская № 1. (Կ.) առ. 744. 4—2

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ
Հոկտեմբերի 13-ին լոյս կը տեսնի «ՏԱՐԱԶԻ» հրատապ № 10 նուիրված ՀԱՅ ՏԱՌԻ 1500-ամեայ և ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ամեայ ՅՕԲԵԼԵԱՆԻՆ։ Գինը մինչև հոկտեմբերի 10-ը բաժանորդագրվողների համար (մէկ) 1 ռուբլի, լոյս տեսնելուց յետոյ 3 ռուբլի։
Դիմել՝ ТИФЛИСЪ, Редакція „ТАРАЗЪ".
26. 5—4
Պատմական անհամար պատկերներ, ծաղկանկարներ և այլն, և այլն։ Ճոխ և շքեղ հրատարակութիւն։

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻՒ պրէպարատներով և էլէքտրականութեամբ։
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։ Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանօվսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 699. 100—16

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս Թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ. (երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռտիշչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը)։
(ա օ.) առ. 746. 100—3

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Այն հեռագիրը, որ տպվեց երկու օր առաջ «Մշակի» մէջ, թէ Ֆրանսիան և Անգլիան նաւեր են ուղարկում Փոքր-Ասիա՝ հայերին պաշտպանելու համար, առիթ է տալիս մեզ նորից դառնալ հայոց հարցին։

Անկասկած, Փոքր-Ասիա ասելով, պէտք է հասկանալ Կիլիկիան, որովհետև ֆրանսիական և անգլիական նաւերը հեշտութեամբ կարող են մտնել միայն Կիլիկիայի ծովեզրեայ քաղաքները։ Այդ լուրը ցոյց է տալիս, որ, ուրեմն, Կիլիկիայում էլ հայերին ջարդերի վտանգ է սպառնում։ Այդ լուրը հաստատութիւն է գտնում և մի այլ կողմից. հեռագիրները հաղորդում են, որ «երիտասարդ-թիւրքերի» կամ «Իթթիհադի» կուսակցութիւնը կազմակերպում է հայերի ջարդ Ադանայում։

Ի՞նչ է հայերի յանցանքը։ Ինչո՞վ են մեղաւոր հայերը, եթէ Չեռնոգորիան, Բօլգարիան, Սերբիան պատերազմ են յայտարարել Թիւրքիային։ Սակայն թիւրքական ֆանատիկոսութիւնը դատել չը գիտէ. չեռնոգորցին, բօլգարը, սերբը քրիստոնեաներ են, հայն էլ քրիստոնեայ է. չը կարողանալով վրէժ առնել առաջիններից, նա իր զայրոյթը թափում է վերջինի վրա, որովհետև նա էլ դաւանակից է նրանց։

Եթէ Կիլիկիայում ջարդեր սկսվեն, անկասկած ջարդեր կը սկսվեն և Հայաստանում, այնտեղ, ուր ոչ ֆրանսիական և ոչ անգլիական նաւերը կարող են հասնել։ Այդտեղ օգնութիւն, պաշտպանութիւն միայն ռուսական պետութիւնը կարող է տալ։

Պէտք է յուսալ, որ ռուսաց հզօր պետութիւնը, որ իր քաղաքականութիւնը արևելեան հարցի մէջ աշխատում է համաձայնեցնել Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքականութեան, նոյնպէս նախաձեռնութիւն յանձն կառնի պաշտպանել Հայաստանի ժողովուրդը թիւրքական մոլեռանդութիւնից և թոյլ չի տայ, որ մի աշխատասէր, անմեղ ժողովուրդ կոտորածի ենթարկվի լոկ նրա համար, որ քրիստոնեայ է։

Ե՞րբ պէտք է Թիւրքաց կառավարութիւնը հասկանայ, որ իր հպատակ հայ ժողովրդի կոտորածը ամենևին չէ կարող փրկել իր գոյութիւնը։ Այդ վայրագութիւնները միայն կարագացնեն նրա սեփական կործանումը և քայքայումը։

Հ. Առաքելեան

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 հոկտեմբերի

Սօֆիա. — Ֆերդինանդ Թագաւորը մեկնեց գլխաւոր բանակատեղին։

Ֆերդինանդ Թագաւորը դիմեց բօլգար ժողովրդին հետևեալ հրովարտակով.

«Բօլգարներ. իմ 20-ամեայ թագաւորութեան ընթացքում հանապազ խաղաղ կուլտուրական աշխատանքի մէջ եմ տեսել Բօլգարիայի փառքի, բարեկեցութեան և առաջադիմութեան գրաւականը, և միշտ ցանկացել եմ, որպէսզի այդ ճանապարհով անսայթաք ընթանայ բօլգար ժողովուրդը։ Նախախնամութիւնը այլ կերպ էր տնօրինել. հասել է այն ժամանակը, երբ բօլգար ժողովուրդը կոչված է հրաժարվել խաղաղութեան բարիքներից և պէտք է զէնքի դիմէ մեծ խնդրի լուծման համար։

«Ռիլօդագի և Ռօդօպի լեռների ետևում մեր արիւնակից ու դաւանակից եղբայրները 35 տարի շարունակ մեր ազատագրութեան օրից ի վեր բաղդ չունեցան ձեռք բերել մարդավայել տանելի կեանք։ Այդ նպատակին ուղղված բոլոր ջանքերը ինչպէս մեծ պետութիւնների, այնպէս և բօլգարական կառավարութեան կողմից չը ստեղծեցին այնպիսի պայմաններ, որոնք թոյլ տային այդ քրիստոնեաներին վայելել մարդկային իրաւունքներ ու ազատութիւն։ Բալկանեան ստրուկների լացը, միլիօնաւոր քրիստոնեաների հեծեծանքը կարող չէին չը ցնցել նրանց հայրենակիցների և դաւանակիցների սրտերը, որոնք իրանց ազատ ու խաղաղ ապրուստով պարտական են մեծ քրիստոնեայ ազատարար պետութեան։ Բօլգար ժողովուրդը յիշում է Ազատարար Թագաւորի այն մարգարէական խօսքերը, թէ սրբազան գործը պէտք է իր վախճանին հասցնել։ Այժմ խաղաղութիւնը խախտված է, և որպէսզի կարելի լինի օգնութիւն հասցնել Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութեանը, մենք ուրիշ միջոց չունէինք բացի զէնք վերցնելուց։ Մենք տեսնում ենք, որ սոսկ այդ ճանապարհով կարող ենք ապահովել Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակութեան կեանքի և արժանապատուութեան պաշտպանութիւնը։

«Թիւրքական նահանգներում սկսված անիշխանութիւնը սպառնալիք էր հանդիսանում անգամ մեր ազգային կեանքի համար։ Իշտիբի և Կօչանի կոտորածից յետոյ փոխանակ արդարութիւն մտցնելու և բաւարարութիւն տալու տուժող կողմին, ինչպէս մենք այդ պահանջեցինք, Թիւրքաց կառավարութիւնը հրաման արձակեց զէնքի կոչելու իր բոլոր ռազմի ուժերը։

«Մեր երկարամեայ համբերութիւնը ծանր փորձանքի ենթարկվեց։ Քրիստոնեային յատուկ մարդասիրական զգացմունքները և եղբօրը օգնելու սրբազան պարտականութիւնը, երբ սպառնում է կոտորած, նաև Բօլգարիայի պատիւն ու արժանաւորութիւնը հրամայողաբար պահանջեցին ինձանից դրօշակի տակ ժողովել հայրենիքի զաւակներին, որոնք պատրաստ են հայրենիքի պաշտպանութեան։

«Մեր գործը արդար է, մեծ, սրբազան։ Յուսալով Ամենաբարձրեալի հովանաւորութեան ու պաշտպանութեան վրա, ազդարարում եմ բօլգար ժողովրդին, որ յանուն Թիւրքիայի քրիստոնեաների մարդկային իրաւունքների պատերազմը յայտարարված է։ Հրամայում եմ քաջարի բօլգար զօրքին շարժվել դէպի Թիւրքական երկիրը։ Ձեզ հետ կողք-կողքի կը ճակատամարտեն ընդհանուր թշնամու դէմ, միևնոյն նպատակին հետամուտ, Բօլգարիայի դաշնակից բալկանեան պետութիւնների՝ Սերբիայի, Յունաստանի և Չեռնոգորիայի զօրքերը։

«Այս կռւի մէջ խաչը հանդէս է գալիս կիսալուսնի դէմ, ազատութիւնը բռնակալութեան դէմ, և մեր կողմը կը լինի այն ամենի համակրանքը, որոնց համար թանգ են արդարադատութիւնն ու քաղաքակրթութիւնը։ Ուժեղ այս գիտակցութեամբ, թող վերյիշէ արի բօլգար զինւորը իր հայրերի և նախահայրերի պանծալի քաջագործութիւնները, իր ուսուցիչներ՝ ռուս ազատարարների սխրագործութիւնները։

«Թող նրա ճանապարհը ծածկվի նոր յաղթութիւնների պսակներով։

«Առաջ, մեզ հետ է Տէրը...»։

Կառավարութիւնը դիմեց արտասահմանեան բօլգարական միսսիաներին՝ առաջարկելով հաղորդել օտարազգի կաբինետներին այն հրահանգ-հեռագիրը, որի մէջ պարզաբանված է ճգնաժամի զարգացման ընթացքը, մատնանշված է, թէ բալկանեան պետութիւնների չափաւորութիւնը հանդիպեց Թիւրքիայի ռազմական վարմունքին, որ զօրաժողովներ կատարեց բալկանեան երեք պետութիւնների դէմ առանց լուրջ հիմունքների, յայտնված է, որ Բօլգարիայի, Յունաստանի և Սերբիայի կառավարութիւնները հարկադրված էին դիմել զէնքի ուժին։

Բօլգարական դեսպանը Բ. Դրանը յանձնեց սերբիական դեսպանի տուած նօտայի նման մի նօտա։

* * *

Կ. Պօլիս.—Պաշտօնական հաղորդագրութեան համաձայն՝ հոկտ. 3-ին Վրանիի մօտերը սկսված ճակատամարտը վերջացել է թիւրքերի յաղթութեամբ, որոնցից սպանվել են 1 օֆիցէր և 15 զինւոր, վիրաւորվել են 3 օֆիցէր և 51 զինւոր։ Չեռնոգորցիք կորցրել են աւելի քան 500 սպանված և յետ են մղվել սահմանից այն կողմ։

Սերբիական սահմանագլխի վրա Սանջակում, Պրիզրէնի մօտ, կատաղի կռիւ է։

Տօմբաշից Թիւրքերը կռւելով չորս ժամվայ տարածութեամբ մտել են բօլգարական երկիրը։ Կռիւը շարունակվում է։

Բ. Դուռը տեղեկացրեց բոլոր վալիներին, որ նրանք պարտաւոր են խափանել քրիստոնեաների և մահմեդականների հնարաւոր միջադէպերը և անմիջապէս զինւորական դատարանին յանձնել անկարգութիւնների յանցաւորներին բոլորին անխտիր։ Զօրքի գլխաւոր հրամանատարի հրամանով՝ զօրքերին խստագոյնս արգելվում է նեղել ազգաբնակութիւնը նոյնիսկ թշնամու հողի վրա։

Եւրօպական վիլայէթներից և Մարմարա, Սև և Միջերկրական ծովերի նաւահանգիստներից արգելված է արտահանել հացահատիկ, գարի, հաճար, եգիպտացորեն, բրինձ, ալիւր, խոտ, անասունների կեր, գետնախնձոր, եղջիւրաւոր անասուն, ոչխար։ Բացառութիւն կազմում է այն հացահատիկը, որ բեռնված է մինչև հոկտ. 24-ը նաւերին, որոնք չեն կարողացել ծով մտնել։

(Հերթական)։ Յունաց դեսպանը, յանձնելով Բ. Դրանը պատերազմի յայտարարութիւնը, մեկնեց Պիրէյ։

Սերբիական դեսպանը մեկնեց ռումինական շոգենաւով դէպի Կոնստանցա, բոլգարական դեսպանը՝ աւստրիական նաւով դէպի Վառնա։

Բէլգրադ.—Բ. Դրանը յանձնված նոտայում ասված է, թէ քանի որ Բ. Դուռը պատասխան չը տուեց Բոլգարիայի, Սերբիայի և Յունաստանի հաւաքական նոտային և որովհետև սերբիական ռազմամթերքների և յունական նաւերի գրաւումից առաջ եկած դրութիւնը ընդունեց աւելի սպառնական բնաւորութիւն նրանից յետոյ, երբ թիւրքաց զօրքերը յարձակումներ գործեցին բոլգարական և սերբիական առաջապահ դիրքերի վրա և Բ. Դուռը խզեց դիպլոմատիական յարաբերութիւնները, սերբիական կառավարութիւնը ստիպված եղաւ դիմել զէնքի ոյժին, դնելով յարաբերութիւնների խզման պատասխանատուութիւնը օսմանեան կառավարութեան վրա։ Ներկայ րոպէից Սերբիան իրան համարում է կռւող կողմի դրութեան մէջ Թիւրքիայի վերաբերութեամբ։

Պետր թագաւորը Պաշիչի և զինւորական շտաբի ուղեկցութեամբ մեկնեց Վրանիա։ Հրաժեշտ տուին միտրոպոլիտը և ռուսաց, բոլգարական և յունաց դեսպանները, բոլոր մինիստրները, զինւորական և քաղաքացիական պաշտօնեաներ և սկուպշտինեան ամբողջ կազմով։ Թագաւորին հանդիպեցին «Ժիվիօ» աղաղակներով։ Քաղաքում մեծ ոգևորութիւն է։

Զօրքերն անցան սահմանը Փիրովչէի և Մարդարի մօտ և յետ են մղում թիւրքերին։ Թագաժառանգ Ալեքսանդրը ստանձնեց զօրքերի հրամանատարութիւնը Րիստովայում, Զիբրովչէում և Ուսկիւբում։ Գեներալ Եանկովիչը հրամանատար է սերբ-բոլգար զօրամասի։

Պաշտօնական տեղեկութիւններ պատերազմի դաշտից չը կան։ Լրագիրները հաղորդում են, որ Ուսկիւբի ուղղութեամբ առաջացող զօրքի առաջընթաց գունդը համարեա առանց կռւի գրաւել է Գիլյէն և Բօեանովցան և դիմում է դէպի Կումանովօ։ Առաջին զօրքի գումարտակը անցաւ սահմանը Վրաբչէի մօտ, արշաւելով Պրիշտինի վրա, գրաւեց երկաթուղային կայարանը, կտրեց Ուսկիւբի կապը Միտրովիցայի հետ։ Երրորդ զօրաբանակը Պրեպոլացի մօտերը կարճատև կռւից յետոյ գրաւել է Պոդուեվօ բերդը։ Առաջընթաց գունդը մտաւ 30 վերստ Հին-Սերբիա։

Իսա Բոլէտինացը անցաւ Սերբիա։

Թագաւորը դիմեց թիւրք ազգաբնակութեանը մի թռուցիկով, որի մէջ ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ սերբ զօրքերը գալիս են ազատելու ճնշվածներին, խոստանում է ազատութիւն դաւանութեան, լեզուի, կեանքի ու ստացուածքի անձեռնմխելիութիւն։

Ուսկիւբ.—Վրանիի և Կիւստենդիլի կողմից հնարաւոր յարձակման դէմ Ջէքի-փաշայի հրամանատարութեամբ 75,000 զինւոր է կենտրոնացած Կումանովօյում, Իշտիբում և Քեօփրիւլիւմ. չորս զօրաբանակ գտնվում են Կոսսովայի դաշտում. մի զօրաբանակ գործում է Բէրանի և Գուսինեէի մօտ։ Ալբան կամաւորները վկայում են, որ զօրքերը ռոճիկ չեն ստանում, ծառայութիւնը վատ է։ Ալբանները աջակցութեան համար դիմում են Աւստրիային։

Պոդգորիցա.—Թագաժառանգի ամուսնուն Միլիցան այցելեց հիւանդանոցը և ընծաներ բաժանեց վիրաւոր չեռնոգորցիներին և թիւրքերին։

Գիշերս բերին 235 պատերազմական գերիների Թիւրքական Գուսինեէից։

Սպասվում են զինված ընդհարումներ Սկիւտարի և Տուզիի մէջ։

Հոկտ. 4-ին թիւրքերը սպանեցին և գլխատեցին մի քանի չեռնոգորցիների։

Տարաբաշի առաջապահ դիրքերի վրա շարունակվում են պատերազմական գործողութիւններ Գուսինեէի և Պլավայի դէմ։

Աթէնք.—(Ճեպընթաց)։ Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ Սերբիան առաջինը պատերազմ յայտարարեց Թիւրքիային, Բոլգարիան հետևեց նրա օրինակին։ Յունաստանը, չը կամենալով անջատվել դաշնակիցներից, հրահանգներ ուղարկեց Կ. Պոլսում պաշտօնավարող յունաց դեսպանին՝ յանձնել Բ. Դրան պատերազմի յայտարարութիւն։

Եղբայրական ողջոյն ուղարկվեց դաշնակից ազգերին։

Աթէնք.—Յունաց նաւատորմը դուրս է գալիս Պիրէյից։

Քաղաքում տիրում է մեծ ոգևորութիւն։

Պարիզ.—Յունաստանի, Բոլգարիայի և Սերբիայի ներկայացուցիչները յանձնեցին ֆրանսիական կառավարութեանը նոտա՝ խնդրելով, որպէս զի Ֆրանսիան պահէ նպաստաւոր չէզոքութիւն յիշեալ պետութիւնների նկատմամբ։

Նիկոլայեվ.—Թիւրքաց հիւպատոսարանը ծառայութեան կոչեց պահեստիներին երեք օրվայ մէջ, սպառնալով չանսացողներին պատասխանատւութեան ենթարկել։

Ամէն օր Օդեսսա են մեկնում բոլգար պահեստի զինւորներ։

Բօրսան չէ գործում։

Օդեսսա.—Պիրէյ մեկնեցին «Աֆոն» շոգենաւով 90 պահեստի յոյներ և 60 կամաւորներ։

Թիւրքաց գեներալ-հիւպատոսը ծառայութեան կոչեց պահեստիներին։

«Русь» շոգենաւով Ռուսչուկ մեկնեցին 450 բոլգար պահեստի զինւոր։

Կիեվ.—Սերբ, բոլգար և չեռնոգորցի կամաւորները շտապով մեկնում են հայրենիք։

(Լրագիրներից)

Ներկայումս բոլգարական զօրքը բաժանված է երկու մասի։ Արևելեան զօրամասը կանգնած է Մարիցայում և թւով 250,000 մարդ է։ Այս զօրամասի հրամանատարն է ինքը Ֆերդինանդ թագաւորը։ Երկրորդ զօրամասը Կիւստենդիլի մօտ հաշւվում է մօտ 100,000 զինւոր։ Վերջինը միանալու է սերբիական զօրաբանակի հետ։

Բ. Դուռը հրամայեց բոլոր զօրամասերին դիմել յարձակման։

Ծովի վրա պատերազմ հաւանականօրէն տեղի կունենայ միայն Թիւրքիայի և Յունաստանի միջև։ Բոլգարիան համարեա նաւատորմ չունի։ Սակայն Աւստրիան հասկացրեց Յունաստանին, որ թոյլ չի տայ պատերազմական գործողութիւններ սկսել Ադրիատիկ ծովում։

Չեռնոգորցիք Բէլպոլիէ կարևոր դիրքը գրաւելուց յետոյ կորցրին 250 սպանված և 800 վիրաւոր։

Ցետինիէում պառկած են ահագին թւով վիրաւորներ, որովհետև Պոդգորիցայի հիւանդանոցները լեփ լեցուն են։

Յունաստանը պատերազմի դաշտում կենտրոնացրել է 100,000 մարդուց բաղկացած զօրաբանակ։

Տեղեակ շրջաններից հաղորդում են, որ այժմ Չեռնոգորիայի սահմանում կենտրոնացել են 128,000 թիւրք զինւոր 30,000 չեռնոգորցիների դէմ։

Յայտնի ֆօն-դէր-Գոլց փաշան Բ. Դրանը ուղարկեց իր կազմած նախագիծը, որով Թիւրքիան պատերազմ է մղելու չորս պետութիւնների դէմ։

Հին Սերբիայում բաշիբօզուկների սանձարձակութիւնները ահաբեկել են քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Քրիստոնեաների ջարդերը անխուսափելի են։

Բոլգարական կառավարութիւնը մի քանի աւստրիական աէրոպլաններ գնեց և հրաւիրեց աւստրիացի օդագնացների իր գործող բանակի մէջ։

Ամբողջ Աւստրիայում տեղի են ունենում եռանդով պատերազմական պատրաստութիւններ։

Շէյխ-ուլ-իսլամը կոչ հրատարակեց, որով նա հրաւիրում է ամբողջ աշխարհի մահմեդականներին օգնել իրանց թիւրք հաւատակիցներին ինչպէս բարոյապէս, այնպէս և նիւթապէս։

Թիւրքիան հրաւիրեց ֆրանսիացի օդագնացների։

Աւստրիական աղբիւրներից հաղորդում են, որ բալկանեան պատերազմը կը տևէ ընդամենը երեք ամիս, որովհետև բալկանեան պետութիւնների ֆինանսները կը բաւեն մինչև այդ ժամանակ։

«Koln. Zeit.»-ի Պետերբուրգի թղթակիցը հեռագրում է, որ արտաքին գործերի մինիստր Սազոնովի դրութիւնը վերջնականապէս դարձաւ անկայուն։ Մինիստրի հրաժարականը վճռված է։

Բոլգարիան ամեն օր պատերազմի պատճառով ծախսում է մի միլիօն րուբլի։ Ուրեմն սեպտ. 24-ից սկսած մինչև այսօր նա ծախսել է 13 միլիօն րուբլի։

Պետերբուրգից շտապով պահանջ ուղարկվեց պերմիեր Պաշիչին հերքել այն յայտարարութիւնը, թէ Սերբիայի թիկունքին կանգնած է Ռուսաստանը։

Թէև վերջնականապէս վերացված չեն սուր վէճերը Ռուսաստանի և Աւստրիայի միջև, բայց և այնպէս աւստրօ-ռուսական յարաբերութիւնները ներկայումս համարվում են հարթ։

Կոմս Վիտտէն արտաքին գործերի մինիստր նշանակելու լուրը ցնծութեան մէջ ձգեց գերմանացիներին և աւստրիացիներին, որովհետև առաջինների կարծիքով Վիտտէն չափազանց գերմանասէր է, իսկ երկրորդները պնդում են, որ նրան այնքան էլ չէ հետաքրքրում սլաւօնների վիճակը։ Անգլիացիք և իտալացիք կոմս Վիտտէից նըպաստաւոր քայլեր չեն սպասում յօգուտ անգլօ-ռուսական կամ ռուս-իտալական յարաբերութեան։ Պարիզում գոհ են նոյնպէս։

Ա. Գուչկովը հրաժարվում է Դումայի աշխատանքներից և մեկնում է Բոլգարիա՝ Կարմիր Խաչի հետ։

Թիւրքահպատակների պաշտպանութիւնը Բոլգարիայում, Սերբիայում և Յունաստանում յանձնվեց Գերմանիային։

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 հոկտեմբերի

Հռոմ.—Թագաւորական հրովարտակը հաշտութեան մասին վաւերացրին բոլոր մինիստրները։

Ստեֆանին հրատարակել է սուլթանի կոչը ուղղված ազգաբնակութեան, որով Շեմսէդդին-բէյը նշանակվում է սուլթանի ներկայացուցիչ Լիվիայում օսմանեան շահերը պաշտպանելու համար։

Մամուլը միաբերան մեծ գոհունակութիւն է յայտնում հաշտութեան առիթով և յիշում է, որ Ռուսաստանը առաջինը 50 տարի առաջ ընդունեց իտալական թագաւորութեան միացումը։

Կոմս Բերխտոլդը գալու է հոկտ. 8-ին Պիզա Սան Ջուլիանոյի հետ տեսակցելու համար։ Միաժամանակ գալու են աւստրո-ունգարական և իտալական դեսպանները։ Երկու մինիստրները հոկտ. 9-ին մեկնում են Սանրոսօրա, ուր ընդունվելու են թագաւորից։

Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանը ստորագրել է իրադէ Եգէյեան կղզիների ազգաբնակութեանը զանազան արտօնութիւններ տալու մասին։ Խոստացված է մտցնել դատական ու վարչական բարենորոգում. այժմեանից դատական և վարչական պաշտօններում նշանակվելու են տեղական լեզուին տիրապետող անձինք. լիակատար ամնիստիա է տրված պատերազմական գործողութիւններին մասնակցած բնակիչներին։

Օդեսսա.—Թիւրք-իտալական հաշտութեան տեղեկութիւնից նաւահանգստում սկսվեց կենդանութիւն։ Իտալական մի քանի նաւ սկսեցին բեռնել։ Յունաց շոգենաւերը նոյնպէս ծով մտան։

Սոֆիա.—Թիւրք-իտալական հաշտութիւնը քաղաքական շրջաններում ընդունվեց անհաճելի զգացմունքով, սակայն ոչ ոք չէ զարմանում այդ դէպքից և լուրջ նշանակութիւն չէ տրվում ներկայ պատերազմի ընթացքում։ Կարծում են, որ Թիւրքիային ծովով զօրքեր տեղափոխելու կարելութիւնը շատ ուշ է տրված։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Այսօր, Թագաժառանգի անուանակոչութեան օրը, մայրաքաղաքը զարդարված է դրօշակներով։ Բոլոր եկեղեցիներում, զօրամասերում և պետական հաստատութիւնների մէջ կատարվեցին մաղթանքներ։

Արտաքին գործերի մինիստր Սազոնովը մեկնեց Սպալա։

Պաշտօնական։ 1913 թւի պետական սովորական եկամուտների գումարը կազմում է 3.169.142,828 րուբլի. արտակարգ եկամուտներ հաշւված են 10 միլիօն. պետական գանձատան յաւելեալ գումարը 29.264,133 ր. ընդամենը 3.208.406,961 ր.։ Պետական ծախքերն են սովորական 2.987.784,205, իսկ արտակարգը 220.622,756 ր., ընդամենը 3.208.406,961 ր.։ Ստորագրեց ֆինանսների մինիստր ստատս-սեկրէտար Կոկովցեվ. ճշդեց պետական գանձատան դեպարտամենտի կառավարիչ Կուզմինսկի։

Գրօզնի.—Ստացված տեղեկութիւնների համաձայն Նազարի սոտնիկցայում չեչէնների և կոզակների ընդհարման ժամանակ սպանվել են 10, վիրաւորվել են 30 մարդ։

Թէհրան.—Սավէի մօտ տեղի է ունենում կռիւ Սալար-ուդ-Դովլէի և Բեռու մուջահիդների միջև։ Հետևանքները յայտնի չեն։ Թէհրանից Քեռուն օգնութեան համար ուղարկվեցին 300 բախտիար 4 թնդանօթով։

Թաւրիզ.—Կովկաս մեկնեց Թիֆլիսի գրենադէրեան գնդի բատալիոնը։

Պարիզ.—Հէյդօնի զօրախումբը Շայուի նահանգի հարաւային մասում ունեցաւ երկու ճակատամարտ, յետ մղեց բէնիմէսակին ցեղին և կորցրեց 6 սպանված և 33 վիրաւոր։

Կուանչենցզի.—Փակվեց Ներքին Մոնղոլիայի իշխանների համագումարը։ Ճանաչվեց Չինաստանի պետական նոր կազմը, ընդունվեց կառավարութեան առաջարկութիւնը Ներքին Մոնղոլիայի և Չինաստանի փոխ-յարաբերութիւնների կարգին վերաբերեալ։

Մէկսիկա.—Նախկին նախագահի քրոջ որդի գեներալ Դիասը առանց կռւի գրաւեց Վէրակրուզը։

Վաշինգտոն.—Ամերիկական «Դէլաւէր» ռազմանաւին պատուէր ուղարկվեց մեկնել Վէրակրուզ՝ ամերիկական շահերի պաշտպանութեան համար։

(Լրագիրներից)

«День» թերթը հաղորդում է, որ Կոկովցեվը մտադիր է հրաժարվել պրեմիերութիւնից պահելով ֆինանսների մինիստրի պորտֆէյլը։ Լուրեր են պտըտվում, թէ պրեմիերի պաշտօնը յանձնվելու է կոմս Վիտտէին։ Խօսում են նաև ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականի մասին։ Նոյնպէս լուր է պտտվում, թէ Շչէգլովիտովին փոխարինելու է սենատոր Մանուխինը։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 1 հոկտեմբերի

Թիւրքահայաստանում հայերի վրա ի գործ դրվող քիւրդական բարբարոսութիւնների պատճառով Թաւրիզի ալեհուփ հայութիւնը խուռն բազմութեամբ լցվել էր երէկ առաւօտ Բիբրաթօղլի եկեղեցին՝ լսելու հ. Մելիք-Թանգեանի քարոզը։ Հայր սուրբը խօսեց յուզված և ազդու՝ բացատրելով Հայաստանի այսօրվայ նողկալի կացութիւնը, համայն հայ ազգի վիշտը, բողոքները, մտմտուքներն ու գոյութիւն ունեցող սարսափների համար մի որևէ դարման գտնելու հնարաւորութիւնը դիմումներով, բողոքներով և այլն։ Պատարագի աւարտումից յետոյ նոյն երկսեռ բազմութիւնը մտաւ Արամեան ուսումնարանի թատերասրահը իբրև ցոյց իր բուռն յուզմունքն ու բողոքն արտայայտելու ազգիս Վեհ. Կաթողիկոսին։ Անմիջապէս հրաւիրվեց Մելիք-Թանգեան Ներսէս վարդապետը ժողովին նախագահելու։ Հայր-սուրբն եկաւ, և կարճ խորհրդակցութիւնից յետոյ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ին ուղարկվեց հետևեալ հեռագիրը, ժողովրդի միաձայն պահանջմամբ և Ներսէս վարդապետի ստորագրութեամբ.

«Այսօր Թաւրիզի հասարակութիւնը ժողովվելով Արամեան դպրոցի սրահում՝ միահամուռ և միաձայն որոշեց դիմել Ձերդ Վեհափառութեան, խնդրելով միջնորդել Նորին Կայսերական Մեծութեան՝ Ռուսաց Կայսեր առաջ վերջ դնելու այն վայրագութիւններին և գազանութիւններին, որոնք կատարվում են բարբարոս քիւրդերի և թիւրքերի ձեռքով Հայաստանում, պահանջելով հայերի կեանքը, գոյքն ու պատիւը»։

Միտինգը վերջացաւ, հասարակութիւնը ցրւեց անհուն յոյսերով։

Հայկազուն

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՔԻՒՐԴՍՏԱՆՈՒՄ *)

VI

Ռուսական զօրքերի ակտիւ մասնակցութիւնը երկրի խաղաղացման գործում Թաւրիզում և այլ նահանգներում մի կողմից, Շուջա-ուդ-Դովլէի քաղաք մտնելը և կախաղանների գործունէութիւնը միւս կողմից և պաշտօնական այն լուրը, որ շուտով Սօուջ-Բուլաղում ռուսական հիւպատոսարան է հաստատվելու, երրորդ կողմից՝ Քիւրդստանի աղայաններին պահեցին սպասողական դրութեան մէջ։ Նոյն կերպով սկսեցին ամենայն եռանդով աւելի զինվել ու կազմակերպվել մինչև այն աստիճան, որ այսօր համայն Քիւրդստանը ներկայանում է մի հսկայական զինանոց, կազմ ու պատրաստ ամեն մի արտաքին ճնշման դէմ։

Թիւրքական ինտրիգան պանիսլամիզմի քօղի տակ ծածկված՝ կատարում է իր դերը ամեն օր և ամեն ժամ. չը նայած որ Քիւրդստանը վերջին տարիները կատարեալ հիասթափութիւն է կրել թիւրքաց ներկայութիւնից և նրանց ձեռք առած անախորժ կանօններից, այնու ամենայնիւ՝ դարձեալ քիւրդերը նախընտրելի են համարում չարեաց փոքրագոյնը, առարկելով որ որքան էլ անտանելի լինեն օսմանեան նորագոյն կանօններն ու «գանունը», այնու ամենայնիւ մուսուլման են և Մարգարէի ընտրեալները. «Եթէ նրանք մեր միսն ուտեն, ոսկորները չեն անպատւի. բայց ուրիշ բան է ռուսը. նա բացի այն որ չէ պատկանում մեր ազգութեան և կրօնին՝ այլ և նրա օրէնքներն անտանելի են մեզ համար»։

Այդպէս է Քիւրդստանի տրամադրութիւնը արտաքին հոսանքի վերաբերեալ, իսկ ներքին կեանքն էլ ուրախալի երևոյթներ չէ պարունակում իր մէջ։

Սիփէհդար-Ազամի եկալը Ատրպատականում որպէս ընդհանուր կուսակալ՝ որոշ տրամադրութիւն առաջ բերեց ազատամիտ կուսակցութեան շարքերում. մի րոպէ ենթադրվում էր, որ պիտի վերահաստատվեն մեռնուկ սահմանադրութեան կարգերը և ռէակցիոն տարրերը պիտի յետ մղվեն ասպարէզից. բայց նրա վերաբերմունքը դէպի Շուջա-ուդ-Դովլէն և վերահաստատումը իր ինքնակոչ պաշտօնի մէջ՝ եկաւ խանգարելու այդ ոսկէ տրամադրութիւնը, և այսօր երկու կողմերն էլ մնացել են անորոշ դրութեան մէջ և չը գիտեն ի՛նչ անեն և ո՛ր կուսակցութեան յարեն։

Հաջի Էլ-խանին, ինչպէս որ գրած եմ վերևում, այն ժամանակ վերսկսեց իր արշաւանքները, երբ Սիփէհդարը երևաց Վասպինջի պարիսպների մօտ. սակայն նա կատարեալ հիասթափութիւն կրեց, երբ Սիփէհդարից ստացաւ կրկնակի հեռագիրներ և այլ սպառնալիքներ, որ վերջ տայ իր շահատակութիւններին։ Պատմում են, որ Էլ-խանին արհամարհանքով է վերաբերվել դէպի Սիփէհդարի հրամանները և ասել է, որ ինքը մինչև այժմ ինչ որ արել է, Սիփէհդարի հրամաններովն է արել, որի համար ունի գրաւոր դօկումենտներ, իսկ եթէ Սիփէհդարը ժխտում է իր նախկին հրահանգները, այդ դէպքում ինքը հնարաւորութիւն ունի մի քանի օրվայ մէջ Սալար-ուդ-Դովլէին բերելու և Քիւրդստանի վրա թագաւոր կարգելու...

Եւ այժմ, երբ մի կողմից զօրաբանակը արդէն Թաւրիզից ճանապարհվել է և մի երկու օրից յետոյ կը հասնի Քիւրդստանի սահմանները, միւս կողմից հաջի Էլ-խանին ի նկատի ունենալով վերահաս վտանգը՝ 4—5 օր է, որ հեռացել է Աւբիդաշ գիւղից, որը գտնվում է զօրքի ճանապարհի վրա, ու ամրացել է իր միւս կալուածքներում, որը մօտ 10 գիւղերից է բաղկացած. իր մօտ են գտնվում և իր ազգական միւս աղայաները, որոնք զբաղված են ընդհանուր խորհրդակցութեամբ, թէ ինչ դիրք բռնեն այն դէպքում, երբ զօրաբանակը սկսէ դրական քայլեր անել Էլ-խանին անձնատուր լինելու համար։ Միւս կողմից ընդհանուր կարծիք կայ, որ Էլ-խանին գաղտնի բանակցութեան մէջ է մտել Սօուջ-Բուլաղի թիւրքական շահբանդարի հետ և երբ թիւրքերը գաղտնի զօրք և ռազմամթերք պիտի տան Էլ-խանին կռւելու կառավարութեան զօրքի հետ։

Սարդար-Մուքրին մինչև վերջին րոպէն պիտի իր չէզոքութիւնը պահպանէ. նա իր գոյնը չէ ցոյց տալիս և որոշ կերպով չէ արտայայտվում. արդեօք այդ վերջին րոպէում նա ո՛ր կողմն է թեքվելու՝ Էլ-խանի՞ թէ՞ կառավարութեան։

Դրութիւնը այսպէս է. մենք անհամբեր սպասում ենք զօրաբանակի տեղ հասնելուն և երբեմն որոշ կերպարանք ստանալուն, որը պարբերաբար կը հաղորդեմ «Մշակին»։ Առ այժմ այսքան։

Խուրշիդ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Լուրեր Հաջընէն

Հաջըն, 7 սեպտեմբեր

Հայաստանի մէջ կատարուած բռնութիւնք, թալան, սպանութիւնք և առևանգում Կիլիկիոյ սահմաններուն մէջ ալ մուտ գտան։ Երկու շաբաթուայ ընթացքում զիրար գերազանցող քստմնեցուցիչ իրողութեանց թատերավայր դարձած է Հաջընը։ Ժողովուրդը յուզման մատնուած՝ հանդարտ սրտով չի յամարձակիր իր դաշտային գործերը աւարտելու։ Անապահովութիւնը տխուր իրականութիւն մըն է այլևս Հաջընոյ շըրջանակին համար։ Կիլիկեան աղէտալի դէպքէն վերջ հազիւ արցունքոտ տարի մը ողջունելու բաղդը ունեցած, բնութեան պարգևած բարիքները վայելելու յանդգնութիւնը չենք զգար բաւականաչափ. ընդհանուր մտատանջութեան մը մատնուած ենք, նկատի ունենալով և կառավարական անհաշտ ընթացքը և Հաջընոյ մասին տուած ոխակալ դիրքը և բանեցուցած սիստեմատիկ բռնութիւնը՝ Հաջընը ցրուելու համար։

Ոստիկան զինուորի մը սպանութիւնը կառավարութեան հանդէպ, հաջընցւոց համախոհ մի ցոյցը նկատուելով, փորձուեցաւ բռնապետական շրջանի ծրագիրը իրականացնել՝ ցրուել Հաջընը, մեկուսացնել Զէյթունը։

Տխուր է ըսել թէ թիւրքի մը սպանութեան համար այնքան աններող և խստապահանջ կառավարութիւնը բոլորովին անտարբեր կը մնայ, երբ խնդրոյ առարկան հայ մըն է։

Տասներկու օր առաջ աղքատիկ ամոլ մը— այր և կին - իրենց չորս զաւակները՝ մին ծծկեր՝ տունը թողլով մօտակայ այգին կերթան... չորս օր վերջ կնոջ մարմինը պղծուած և խողխողուած կը գտնուի, իսկ այրը ցարդ անյայտ կը մնայ. այգիի ձերբակալուած պահապանը արձակուեցաւ. խնդիրը բոլորովին փակուած է։

Ասիկա լուռ քաջալերական մըն էր պարզապէս ի վնաս հայերուս. այսպէս՝ Քէօսէլէր գիւղին մէջ կը դաշունահարուի հաջընցի պատուական երիտասարդ մը. Կապբէլի մէջ կը սպանուի երկու հայ՝ նոյնպէս հաջընցի.

---

*) Տես «Մշակ» № № 217, 218, 219, 220 և 221.

Եվերէկի ճամբուն վրայ կը կողոպտուի Հաճընոյ ամերիկեան միսիոնարուհիներէն մին՝ երկու հայ ընկերուհիներով: Վարի ճամբուն վրայ կը կողոպտուի անգլիացի մը որ իր մանկամարդ կնոջ հետ մեղրալուսնի ամիսները կանցնէր Թիւրքիոյ մէջ ճամբորդելով: Եկած էր Պոլիսէն Հալէպ և կուղեւորուէր ի Հայաստան: Ազիզիէի մէջ կը սպաննեն չէրքէզ գիւղապետ մը, կը յափշտակեն տասնեակ ձիեր և կելլեն լեռ: Կառավարութեան երկաթեան կարգադրութիւնք ոչ մէկ արդիւնք չեն ունեցած. ոճրագործներէն ոչ մին ձերբակալուած է և տեղակալին և կառավարիչին քննական պտոյտներն ալ... պարապ ելան, ինչպէս արդէն վստահ էինք:

Թղթակից

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ՆԱՑԻՕՆԱԼԻԶՄԸ

(Մի էջ Դաշնակցութիւն կուսակցութեան աւանդական քաղաքականութիւնից)

I

Թիւրքահայ հարցը, որպէս մի ժողովրդի ազգային ամբողջութեան գոյութեան սահմանները շօշափող քաղաքական պօստուլատ, կրկին հրապարակ նետուեց վառ գոյներով: Մեծ հզօրների դիւանագիտական կաբինէտները չեն, սակայն, որ հեռագրական [illegible] հաղորդագրութիւններով բռնադատէին Բօսֆորի ափերին ծառացած դարաւոր արիւնարբու կառավարութեան՝ լուծելու արեւելեան հարցի մինչ օրս քաշկըռտվող ու ոտնահարվող մասնիկը: Այդպիսի «հոգատար» վերաբերմունք դիւանագիտական «խնամակալների» կողմից՝ բաժին չէ ընկել երբէք Թիւրքահայ հարցին իր ծագումից ի վեր: Ինքը հարցը, եթէ ուզում էք, վառ գոյների քաղաքական որակով չէ ապրել իր բազմամեայ կրիզիսի օրով, եթէ ի նկատի չունենանք մի քանի սուր մոմենտներ՝ ըստ երևոյթին յուսատու սկզբնաւորութեամբ, բայց յետոյ յուսախաբ վիժումներով: Այդ տեսակէտից մակեդոնական և ալբանական հարցերը համեմատաբար նախանձելի պատմութիւն են ունեցել և այժմէականութիւն են կրում: Հայկական հարցը վառ գոյներ ստացել է միայն մասսայական նախճիրի բնաւորութեամբ, արեան առատահոս առուակներով ու լճակներով: Իսկ այդպիսի մոմենտները, որքան էլ աղեխարշ լինեն նրանք, գրիչներ չեն շարժում դիպլօմատների կաբինէտներում. դիւանագիտական «էտիկան» չունի հրահանգներ գթութիւն հայցողների, աղերսանքի հեղինակների համար: Մի ժողովուրդ, եթէ չէ կարողանում նոյն իսկ պասսիվ վիճակի, նահանջողական դիրքերի մէջ ինքն իրան պաշտպանել, այլ մասսայաբար փռվում է գետնին իր թշնամիների սուր ու հրի առաջ, այդպիսի մի ժողովուրդ երևի հէնց արժանի է այդ վախճանին, չը կայ նրա համար փրկութիւն դրսից,—այսպէս է բարբառում ձեզ յաւիտենական եւրոպական հզօրների դիպլօմատիան:

Ձեռքերս կապած, ոտքերս շղթայ,
Կասէ Եւրոպան՝ հէյ ելէք ոտքի,
Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չը կայ,
Տարէք, կրեցէք դուք կեանք ստրկի:

Թիւրքահայ ժողովրդի պատմութեան ճակատագրական տրագիզմը այսօր իսկ չէ դադարում այնպիսի փաստեր արտադրել հրապարակով, որոնց վերաբերմամբ բանաստեղծի սրամիտ տողերը գրեթէ նոյնքան տեղին ու այժմէական են, որքան նրանց գրի անցրած ժամանակ՝ նախահամիդեան և համիդեան ռէժիմի շրջանում: Այդ տրագիզմը ունեցել է դառնագոյն էտապներ իր երկարաձիգ գոյութեան ողջ պրօցէսում, իսկ նրա վերջին՝ մեր օրերի, էտապը ստացել է դառնագոյն իրօնիայի բնաւորութիւն. իրօնիա՝ պատմութեան քըմահաճ խաղերի: Օրէնքով արգելել հպատակ ժողովուրդներից որոշ հատուածների զէնք կրել ու գործածել նոյնիսկ այն ժամանակ, երբ ամբողջ բռնակալութեան փլատակների վրա կառուցվել է եւրոպական իրաւակարգի մի պետութիւն, սա աւելի քան իրօնիա է իրաւազուրկ հատուածների հասցէին: Թողէք մի երկրի կառավարութիւն լինի գերագոյն աստիճանի րէակցիոնէր, ոտնահարէ շարունակ սահմանադրութեամբ հրաշխաւորված քաղաքացիական ազատ իրաւունքների հիմնական պրինցիպները. թողէք նա պարլամենտական օրէնսդրութեան քղանցքի տակ՝ շարունակ երազներ տեսնէ ու փափագէ վաղեմի աբսօլիւտիզմի փշրված սիւնը վերականգնելու համար. թողէք նա իր զօրքի, բիւրօկրատիայի, ոստիկանութեան բանակները կազմելիս՝ անդամներ ընտրէ տիրապետող ազգատոհմից բացառապէս կամ մեծ մասամբ, չը տալով նոյն կամ նման իրաւունքներ ու պաշտօններ հպատակ ազգութիւններին, և այլն.—այդ բոլորը տեսել ենք, տեսնում ենք և պիտի տեսնենք շատ երկրներում: Սակայն մի կառավարութիւն այնքան հեռու գնայ իր ոճրագործ անտարբերութեան մէջ, որ չուզենայ իր հպատակ քաղաքացիների ֆիզիկական ես-ն ու գոյքը—ամենաբնական ու մինիմալ պահանջները—ապահովել անխախտելիօրէն, դա այնպիսի մի պատմական սև էջ է, որի վերաբերմամբ օսմանեան պետութիւնը պահպանել է իր աւանդական տխուր բացառութիւնը: Նստած են Եըլտըզ-Քէօշքում դեսպօտ, սանձարձակ սուլթաններ, թէ սահմանադրական միապետներ. շրջապատված են նրանք ենիչերական արիւնլուայ պահակներով, թէ սպիտակ ձեռնոցներ հագած և ֆրանսերէն ճառող երիտասարդ-Թիւրքերի խորհրդականներով,—ողջ մէկ է, վիրաւոր երևոյթը մնում է տակաւին անսասան. քիւրդական արշաւանք ու կոտորած Փոքր-Ասիայում, կառավարական դահճային բռնութիւններ Մակեդոնիայում և Ալբանիայում՝ պահպանել են անվթար իրանց եզակի բնաւորութիւնը՝ յաճախակի կրկնութիւններով, նոյնիսկ 1908 թուականից ի վեր:

Intimus

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԵՖԻՑԻՏԻ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ

Անկասկած է, որ Ներսիսեան դպրոցը վերջին 5-ամեակում, սկսած 1906 թւից, ունի բաւականին խոշոր դեֆիցիտ: Այս խնդիրը վերջերս հոլովվում է զանազան ձևերով՝ թէ քանակի և թէ պատճառների ու գործադրութեան վերաբերմամբ:

Ոմանք գտնում են դեֆիցիտը 100,000 ր., ոմանք 130—150,000 ր., ոմանք մինչև իսկ 200,000 ր.: Ընդհակառակը՝ կան նաև այնպիսիք, որոնք դեֆիցիտը աշխատում են խիստ փոքրացնել և այն էլ փաստաբանութեամբ, թէ գոյացել է շէնքեր կառուցանելու և կալքեր գնելու պատճառով:

Որովհետև խնդիրը շատ կարևոր է և հասարակութեան արդարացի հետաքրքրութեան արժանացած, կուզենայինք սրանով դեֆիցիտի իսկական պատկերը տալ հասարակութեան, իսկ այդպիսին գոյանալու պատճառաբանութիւնը և բացատրութիւնը թողնելով ում հարկն է, երբև պաշտօնատար մարմնի:

Մեր ձեռքի տակ ունենք հոգաբարձութեան երեք տպագրված տեղեկագրերը հաշւետւութեան չորս ժամանակամիջոցի բաժանված. սրանցից երկուսը արդէն հաստատված են թեմական ժողովների կողմից, իսկ երրորդը, այսինքն վերջին տեղեկագիրը, հաստատութեան է ներկայացվելու առաջիկայ թեմական ժողովին. ահաւասիկ մեր թւական և փաստացի տեղեկութիւնները լինելու են այդ աղբիւրներից, ի հարկէ, առանց մեզանից ոչ մի բառ կամ տառ աւելացնելու:

Առաջին տեղեկագիրը իր մէջ պարունակում է հոգաբարձութեան գործունէութիւնը յուլիսի 14-ից 1906 թ. մինչև 1-ն սեպտեմբերի 1908 թ., սակայն տեղեկագրի մէջ այդպիսին բաժանվում է երկու մասի. առաջին մասը 1906 թ. յուլիսի 14-ից մինչև 1-ն յունվարի 1907 թ. (տեղեկագիր եր. 10—15), իսկ երկրորդ մասը յունվարի 1-ից 1907 թ. մինչև 1-ն սեպտեմբերի 1908 թ. (տեղ. եր. 25—50):

Յիշածս տեղեկագրի առաջին մասի հաշւից երևում է, որ յուլիսի 14-ից 1906 թ. մինչև 1-ն յունվարի 1907 թ. ծախս եղել է ընդամենը 81,619 ր. 97 կ.:

Այս գումարի մէջ մտնում են հետևեալ գումարները, որոնք անվերադարձելի ծախսեր չենք համարում.

20 կրպակների կառուցման ծախս 26,900 ր., տիկ. Նազիրեանից գնած հողերի վարձ 10,450 ր., Մեհրաբեանից գնած տան վարձ 3564 ր. 30 կ., կահկարասիք 2258 ր. 64 կ., ընդամենը 43,172 ր. 94 կ., որը դուրս գալով ընդհանուր ծախսից՝ այսպիսով կը մնայ զուտ ծախք դպրոցի և կալուածների կառավարութեան վրա 38,447 ր. 3 կ.:

Այդ ժամանակամիջոցում ընդամենը եղել է եկամուտ կալուածներից, մոմավաճառութիւնից, տոկոսիքներից և այլն 24,679 ր. 24 կ.:

Այսպիսով ուրեմն դուրս գալով ծախսերի գումարից եկամուտի գումարը, կը տեսնենք, որ ծախսի գումարը աւել է եկամուտից, այսինքն դեֆիցիտ 13,767 ր. 79 կ.:

Նոյն տեղեկագրի երկրորդ մասի հաշիւները ներկայանում են հետևեալ ձևով: Այստեղ պէտք է նկատենք, որ այդ տեղեկագիրը կազմված է բաւականին անկանոն և հաշիւներից գաղափար չունեցողը որոշ եզրակացութեան գալու համար կարող է ոտքը կոտրել...

Հաշւետւութեան այս մասում գործունէութեան եզրակացութիւնը կենտրօնացված է «Դրամագլխի հաշիւ» վերնագրով հաշւում և այն ձևով է կազմված, որ երբէք սովորական ընթերցողը հնար չի ունենայ իմանալու դեֆիցիտի գոյութեան և այդպիսիի քանակութեան մասին, այլ հարկաւոր է մի լրացուցիչ հաշւապահութիւն՝ դեֆիցիտի գումարը որոշելու: Փորձենք:

Կրեդիտի մի շարք գումարներից պէտք է վերցնել հետևեալ մուտքի գումարները.

ա) Մոմավաճառութեան կապալից 16,000 ր. 81 կ., բ) Անշարժ կալուածների եկամուտից 78,665 ր. 86 կ., գ) Կողմնակի եկամուտներից 1572 ր. 31 կ., դ) Տոկոսիքի հաշւից 451 ր. 1 կ.: Մուտքի գումարը կը լինի 96,689 ր. 98 կ.:

Ծախսի գումարները նոյն տեղում կազմում են.

ա) Ընթացիկ ծախսեր 111,069 ր. 28 կ., բ) Անշարժ կալուածների ծախս (ոչ շինութիւն) 22,513 ր. 65 կ., գ) Չքաւոր աշակերտներին օգնութիւն 9,301 ր. 42 կ., դ) Նպաստներ 504 ր. 20 կ., ե) %%-աբեր տոմսերի ապահովութիւն 244 ր., զ) Անակնկալ ծախսեր 205 ր.: Ծախսի գումարը՝ 143,837 ր. 55 կ.:

Ուրեմն ծախսված գումարից եթէ հանենք զուտ եկամուտը, կը մնայ ծախսի գումարի աւելորդ կամ դեֆիցիտ 47,147 ր. 57 կ.:

Այս երկրորդ շրջանում կառուցված են շինութիւններ, որի գումարը, ի հարկէ, չէ մտած վերևում յիշված գումարների և դեֆիցիտների մէջ՝ 45,598 ր. 19 կ.:

Երկրորդ տեղեկագրի համաձայն սեպտեմբերի 1-ից 1908 թ. մինչև 1-ն սեպտեմբերի 1909 թ. գոյացած է մաքուր դեֆիցիտ, ուր նմանապէս չեն մտնում կալուածների գնման կամ շինութեան ծախք 11,797 ր. 92 կ.:

Երրորդ տպագրված տեղեկագրի համաձայն՝ սեպտեմբերի 1-ից 1909 թ. մինչև 1-ն սեպտեմբերի 1910 թ. գոյացած է նմանապէս մաքուր դեֆիցիտ 20,793 ր. 96 կ.:

Գումարելով այս դեֆիցիտների չորս գումարները կը տեսնենք, որ Ներսիսեան դպրոցը 1906 թ. յուլիսի 14-ից մինչև 1910 թ. սեպտեմբերի 1-ը, այսինքն չորս տարվայ եւ մէկ ու կէս ամսվայ ընթացքում, ունեցել է զուտ դեֆիցիտ, որի մէջ չէ մտնում ոչ նոր կալքեր գնելու գումարը և ոչ նոր շէնքերի և վերանորոգութիւնների ծախսեր, ընդամենը 93,507 ր. 24 կ.:

Պէտք է նաև աւելացնենք, որ բոլոր վերև յիշված ժամանակամիջոցում կալքերի եկամուտները հաշւած են լրիւ մուծված, մինչդեռ կան ապառիկները, և այդպիսիք մինչև այսօր մեծ մասամբ անցնում են մատեանից-մատեան առանց գանձվելու:

Մեր կարծիքով այդ ապառիկների մի մասը նաև պէտք է զիջել և աւելացնել դեֆիցիտի գումարին մօտաւորապէս 10,000 ր., որով և իսկական դեֆիցիտի գումարը պէտք է հաշւել երբև կլոր գումար 103,000 րուբլի:

Տալով դեֆիցիտի իսկական պատկերը և գումարը, կարծում ենք, որ հոգաբարձութիւնը իրաւունք չունէր տարէ-տարի դեֆիցիտը գոցել դպրոցի անձեռնմխելի գումարներից, այլ այդպիսիք պէտք է երևային տեղեկագրերում երբև պարտք, որը պէտք է նկատվի երբև սեպուհ պարտականութիւն ներկայ և ապագայ հոգաբարձուների համար միջոցներ որոնել այդպիսին լրիւ լրացնելու և բացը գոցելու համար:

Եթէ մի բոպէ ենթադրելու լինենք, որ նախկին հոգաբարձական կազմերը լինէին հեռատես տնտեսագէտներ և զգոյշ գործիչներ և իրանց վերմակի չափով ոտները մեկնողներ, այս բոպէս դեֆիցիտի գումարը՝ 103,000 ր. կունենայինք դպրոցի սընդուկում, ապա ուրեմն եկամուտները դպրոցի դրանցից ստացված տոկոսներից կաւելանար տարեկան 6000 ր. և կարելի կը լինէր հոգալ Ներսիսեան դպրոցի հազար ու մէկ կարիքները:

Մի անգամ ընդ միշտ պարզելու համար այս կնճռոտ հարցը, հոգաբարձութեան վրա, մեր կարծիքով, պարտք է ընկնում կատարելապէս լուսաբանել այս խնդիրը, զեկուցել առաջիկայ թեմական ժողովին և վերջնական գումարը այսուհետև ցոյց տալ տեղեկագրերում երբև լրացնելու պարտք յետագայ հոգաբարձութիւնների գործունէութիւնների շրջանում:

Շիրին

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

«Մշակի» երէկվայ համարում տպված լուրը, թէ Շուշու գաւառի խոշոր կալուածատէրերի կողմից պատուիրակ է ընտրված հայ կալուածատէր Իվան Ուզբաշեանը սխալ է. ընտրված է Իվան Խուբլարեան, շուշեցի կալուածատէր և օղի գործարանատէր Ագդամում, ուղղութեամբ առաջադիմական:

—

«Հօրիզօնը» իր երէկվայ համարում խօսելով, թէ Թիֆլիսում Պետական Դումայի պատուիրակների ընտրութեան ժամանակ մրցում էին երեք խմբակցութիւններ, յայտնում է, թէ իբր «Մշակը» բերան էր այն խմբակցութեան, որ կոչվում է պրօգրէսիստ-անկուսակցական և իբր թէ այդ խմբակցութիւնը բաղկացած է առևտրա-արդիւնաբերողներից: Մեր հակառակորդ թերթի այդ յայտարարութիւնը դիտաւորեալ և յերիւրեալ չարախօսութիւն է: «Մշակը» ներկայ ընտրութիւնների ժամանակ երբև կուսակցութիւն կամ խմբակցութիւն բնաւ հանդէս չէ եկել. նրա և մշակականների ընդհանուր լօզունգն եղել է ներկայ ընտրութիւնների ժամանակ համերաշխ ընթանալ սահմանադրա-ռամկավար և պրօգրէսիստ տարրերի հետ. և այն խմբակցութիւնը, որ առաջարկել է Ա. Քալանթարի, Ց. Խունունցի, Գ. Թումանեանի և բժ. Կ. Ստեփանեանի կանդիդատութիւնը, բնաւ բաղկացած չէ առևտրա-արդիւնաբերողներից, այլ ընդհանրապէս պրօգրէսիստ և արմատական ինտելիգենցիայից: Եղել են մշակականներ, որ նոյն իսկ ձայն են տուել ձախակողմեանների ցուցակին, և բանւորական ցուցակով ընտրված պատուիրակներից մէկը նոյն իսկ «Մշակի» աշխատակիցն է: Ինչ վերաբերում է առևտրա-արդիւնաբերողներին, որոնց մասնակցութեան փաստով «Հօրիզօնը» որպէս թէ կամենում է վարկաբեկել «Մշակը» և պրօգրէսիստների խմբակցութիւնը, դրան կը պատասխանենք, որ, յամենայն դէպս, առևտրա-արդիւնաբերողների մէջ կան աւելի արմատական հակումներով անձինք, քան, օրինակ, Գ. Կաֆիեանը, որ ձախակողմեանների կանդիդատ է և որը ոչ մի բանով չէ տարբերվում տիպիկ և բուն բուրժուայից՝ կամ Ա. Ցարութիւնեանից, որի ձախակողմեանութիւնը միայն ծիծաղ կարող է յարուցանել:

—

Բագու քաղաքը, ինչպէս յայտնի է, Թիֆլիսի նման՝ տալիս է 8 պատուիրակներ: Որովհետև այդտեղի ազգաբնակութեան մեծամասնութիւնը թուրքեր են, ուստի և պատուիրակների ընտրութեան վերաբերմամբ պէտք է համաձայնութիւն կայանայ թուրքերի և հայերի միջև: Անցեալ անգամ թուրքերը համաձայնել էին տալ հայերին 3 տեղ: Այս անգամ ևս թուրքերը կայացրել են նոյն որոշումը, այն է ընտրել 3 պատուիրակ հայերից և 5-ը թուրքերից: Հայերը նախապէս խորհրդակցութիւն կազմելով որոշում են իբրև կանդիդատներ առաջարկել պրօգրէսիստ բանակին պատկանող պ. պ. Մ. Պապաջանեանին, Կ. Խատիսեանին և բժ. Թ. Զաքարեանին: Սակայն անձնական փառասիրութիւնը, որ շատ բաներ է փչացնում, այս անգամ ևս գալիս է երկպառակութիւն սերմանելու հայերի մէջ: Դրանցից մի երկուսը, Գ. Կարա-Մուրզա և Տ. Բեգզադեան, տեսնելով որ իրանք չեն մտել ցուցակի մէջ, սկսում են լարել ինտրիգներ և բլօկ են կազմում մուսուլման ընտրողների մի մասի հետ և հայ կանդիդատների նոր ցուցակ են կազմում, որի մէջ մտնում են Գ. Կարա-Մուրզա, Տ. Բեգզադեան և Մ. Պապաջանեան: Այն տեսակէտը, որով Գ. Կարա-Մուրզան արդարացնում է իր [illegible] վարմունքը և որ կայանում է նրա մէջ, թէ չը պէտք է կազմել և անցկացնել միատեսակ ուղղութեան կանդիդատներ, այլ խայտաճամուկ և տարբեր ուղղութեան կանդիդատներ, միանգամայն անկայուն է, որովհետև դա տեսակէտն է որոշ, անխախտ համոզմունք և ուղղութիւն չունեցող անձանց, դա տեսակէտն է օպպօրտիւնիստների, դա տեսակէտն է այն անձանց, որոնք այսօր ձախակողմեան են լինում, վաղը կարող են անցնել սև-հարիւրեակների բանակը:

Բագւում կայացել է հոկտ. 2-ին նախընտրական ժողով, որը, սակայն, ոչ մի եզրակացութեան չէ եկել: Երկու խմբերն էլ պահպանել են իրանց ցուցակը: Ցանկալի էր, ի հարկէ, որ անցնէր հայ պրօգրէսիստների ցուցակը, այն է՝ պատուիրակներ ընտրվէին Մ. Պապաջանեան, Կ. Խատիսեան և Թ. Զաքարեան:

Այդ խորհրդակցական ժողովում Ք. Վերմիշեանի և Կ. Խատիսեանի արտասանած ճառերի բովանդակութեան հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին, ցոյց տալու համար որ նրանց հայեցակէտը հայ պատգամաւորի վերաբերմամբ աւելի կանոնաւոր և ճիշդ է:

—

Բագւում պատուիրակների ընտրութիւնը նշանակված էր հոկտ. 5-ին, սակայն, ինչպէս հաղորդում են լրագիրները, ընտրութեան դահլիճը մտնում են մի խումբ անձինք, տակն ու վրա անում տուփերը, և ընտրութիւնները չեն կայանում:

—

Թիֆլիսի նահանգական մասնաժողովը հաստատեց բանւորական կուրիայի լիազօրների կողմից ընտրված պատուիրակների ընտրութիւնները:

—

Գանձակի ռուս կուրիայի կողմից պատուիրակ է ընտրվել աջակողմեան Ի. Վարշավսկին՝ նահ. դատարանի դատախազի օգնական:

—

«Յ. Բ.» ի ասելով իշխ. Անդրօնիկօվը աւելի շատ ձայներ ունի վրացիների կողմից, քան 3-րդ Պետ. Դումայի անդամ Չխեիձէն: Երկուսի ձայների տարբերութիւնը 7 է: Բացի վրացիներից, լրագրի ասելով, Անդրօնիկօվին ձայն են տալու բոլոր մահմեդականները: Յաղթութեանը նպաստելու են հայերը:

—

Պետերբուրգի Հեռագր. Գործակալութեան թղթակիցների հեռագիրներից երևում է, որ ամբողջ Ռուսաստանում պատուիրակների ընտրութիւններին մինչև այժմ յաղթութիւնը մնում է աջակողմեան կուսակցութիւնների թեկնածուների կողմը, որոնց թւումն են նաև հոգևորականները. ապա գալիս են հոկտեմբերեանները, յետոյ կադէտները և վերջապէս սօցիալ-դեմօկրատները: Սակայն մի քանի տեղերում անցել են ամբողջապէս ձախակողմեանները:

—

Մոսկվայի կողմից սահմ.-ռամկավար կուսակցութիւնը Պետական Դումայի պատգամաւորի պաշտօնի համար մատնանշել է յայտնի ռուս հասարակական գործիչ Նովիկովին:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԲԺ. ԱՐ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻՆ

Անաչառութեան պարտքից առնված մենք տպեցինք երէկ «400-ամեայ հայ տպագրութեան յոբելեանի յանձնաժողով» կոչված ինքնակոչ յանձնաժողովի նախագահ՝ բժ. Ա. Զարդարեանի նամակը, որով պ. բժիշկը ջանում է հերքել այդ յանձնաժողովի դէմ եղած մեղադրանքները—բայց այնքան անյաջող, որ հերքելու փոխարէն հաստատում է—և հասարակական գնահատութեան ու դատաստանին է ենթարկում «Մշակի» վարմունքը:

Մենք ևս հասարակական գնահատութեան և դատաստանին կենթարկենք այդ ինքնակոչ յանձնաժողովի և մանաւանդ նրա նախագահ բժ. Ա. Զարդարեանի վարմունքը:

Թիֆլիսի յանձնաժողովի դէմ եղած մեղադրանքները հետևեալներն էին. 1) Նա կամենում է հաւատացնել հայ հասարակութեան, թէ ինքն ընտրված է Թիֆլիսի բոլոր կուլտուրական և դպրոցական հայ հաստատութիւնների, ինչպէս և հայ մամուլի օրգանների ներկայացուցիչների ձեռքով. 2) Նա, հասարակական կարծիքը մոլորեցնելու համար, թոյլ տուեց իր մի որոշումը յայտարարել իբրև կայացած, միաձայն, մասնակցութեամբ իր բոլոր անդամների, որոնց թւում գտնըվում են նաև Եփրեմ եպիսկոպոսը, Ի. Ցարութիւնեանը, Նար-Դոսը, Գիւտ ք. Աղանեանը և այլք, մինչ այդ նիստին ներկայ չէին եղել և որոշման չէին մասնակցել ոչ Եփրեմ եպիսկոպոսը, ոչ Ի. Ցարութիւնեանը և ուրիշները: Եւ շատ տարօրինակ կը լինէր, որ Էջմիածնի մի եպիսկոպոս, մի առաջնորդ մասնակցէր մի որոշման, որի նպատակն էր պախարակել և դատապարտել Էջմիածնի և Կաթողիկոսի վարմունքը. 3) Նա, այդ ինքնակոչ յանձնաժողովը, չը նայելով որ ընտրված է միայն Թիֆլիսի մի քանի հաստատութիւնների կողմից, այն էլ մեծ մասամբ այնպիսիների, որոնք զուտ գրական և ազգային տեսակէտից շատ քիչ կարևորութիւն են ներկայացնում, ջանում է ցոյց տալ իրան իբրև մի կենտրօնական յանձնաժողով, որ պէտք է ղեկավարէ համազգային մի մեծ յոբելեան, մինչ նա թէ իր ընտրութեան պայմաններով, թէ իր անդամների յատկութիւններով բնաւ կոչված չէ այդպիսի դեր խաղալու. 4) Թիֆլիսի ինքնակոչ յանձնաժողովը կամ, աւելի ճիշդ, նրա մի քանի անդամները՝ Լէօ, բժ. Զարդարեան և Գ. Վարդանեան, տեսնելով որ իրանց անզուսպ փառասիրական ձգտումները չեն իրականանում, այսինքն որ համազգային տօնը կատարվելու է ոչ իրանց միջոցով, սկսեցին ամեն միջոց գործ դնել խանգարել Էջմիածնի տօնը, չը նայելով որ Էջմիածնի յայտարարածը աւելի լայն և աւելի համազգային է, քանի որ Էջմիածինը տպագրութեան տօնին աւելացրել է գրերի գիւտի 1500-ամեակը:

Ահա այն գլխաւոր մեղադրանքը, որ մենք և մեզ հետ հայ հասարակութեան և ինտելիգենցիայի ողջամիտ մասը արել և անում է Թիֆլիսի ինքնակոչ յանձնաժողովի դէմ:

Արդ, ինչով է հերքում այս ամենը բժ. Ա. Զարդարեանը: Նախ, նա հերքում է միայն երկուսը այդ մեղադրանքներից, լռութեան տալով մնացածները: Նա կամենում է ցոյց տալ, որ ինքն ընտրված է նաև «Մշակի», «Արօրի» և «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնների և Յովնանեան դպրոցի կողմից: Այդ առարկութիւնը արդէն պերճախօս փաստերով հերքեց Ս. Մալխասեանը «Մշակի» մէջ: Ապա, ինչ վերաբերում է կատարված կեղծիքին, որ նա գիտմամբ այնպէս է ցոյց տուել, իբր թէ յանձնաժողովի բոլոր անդամները միաձայն կայացրել են որոշումը Էջմիածնի դէմ, նա, նախ խոստովանում է, որ, արդարև, Եփրեմ եպիսկոպոսը չէ մասնակցել, և ապա նոր խոստովանում է, թէ որոշումը կայացել է ներկայ եղող անդամների ձայների առաւելութեամբ և միաձայն: Ուրեմն, բժ. Ա. Զարդարեանը ինքը դրանով ապացուցանում է, որ որոշումը չէ կայացել յանձնաժողովի բոլոր անդամների մասնակցութեամբ, որ Եփրեմ եպիսկոպոսը ներկայ չէ եղել: Ապա նա դարձեալ դիմում է խարդախութեան. կօրրեկտ, օրինաւոր մարդը կը գրէր, թէ նիստին ներկայ են եղել այս ինչ անդամները, կը յիշէր նրանց անունները յականէ յանունէ, որպէսզի իմացվի, թէ քանի հոգի և ովքեր ներկայ են եղել և քանի հոգուց է բաղկացած միաձայնութիւնը: Այդ հանգամանքը բժ. Զարդարեանը աշխատում է խնամքով թագցնել:

Հ. Ա.

ՄԻ ՆՈՐ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Շուշի, 2 հոկտեմբերի

Սեպտեմբերի 30-ին, կիրակի, Մեղրեցոց կոչված թաղում տեղ ունեցաւ մի ճաշկերոյթ, որ կրում էր հասարակական բնաւորութիւն:

Այդ թաղի եկեղեցու գաւթում գտնվում է մի ծխական դպրոց, որի շէնքը իր խոնաւութեամբ, անյարմարութեամբ և հակաառողջապահական պայմաններով անտանելի էր: Եւ ահա թաղի հարուստներից մինը, վաճառական պ. Թէոդորոս Խաչիեանը, յանձն է առնում իր ծախքով կառուցանել եկեղեցուն կից, հին դպրոցի տեղը, մի նոր ծխական դպրոց 150 երեխաների համար, և աջողութեամբ գլուխ է բերում գործը: Նոր ծխական դպրոցը՝ թէև համեստ, բայց գեղեցիկ և մանկավարժական ու առողջապահական պահանջներին համապատասխան մի շէնք է. բարձր, լուսաւոր, լայն սենեակներով և գալերէայով: Այս սեպտեմբերի 1-ից ուսումն արդէն տեղի է ունենում այդ նոր շէնքի մէջ և 150 երեխաներ, ազատվելով նախկին խոնաւ և ցուրտ շէնքից, դասաւորված են այժմ չոր, լուսաւոր, օդաշատ սենեակներում:

Թաղի ծխականները, ղեկավարութեամբ ծխական հոգաբարձութեան, Խորէն քահանայ Իսկէնդէրեանի և երէցփոխ Ա. Մանկասարեանի, կամենալով երախտագիտական մի պարտք կատարել բարերար Թ. Խաչիեանի հանդէպ, կազմակերպել էին մի ճաշկերոյթ, ի պատիւ Թ. Խաչիեանի, և հրաւիրել էին, իբրև պատւաւոր հիւրերի, նաև «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեանին,—որ այդ օրերը ժամանել էր Թիֆլիսից, Պետական Դումայի ընտրութիւնների առիթով—և քաղաքագլուխ Գ. Ս. Քալանթարեանին, որն և ընտրվեց սեղանի կառավարիչ։

Քաղաքագլուխը առաջարկեց առաջին բաժակը բարերար Թ. Խաչիեանի կենացը, դրուատելով մի քանի համառօտ խօսքերով նրա կատարած թէև համեստ, բայց արդիւնաւէտ գործը, որ հնարաւորութիւն է տալիս մի ամբողջ Թաղի երեխաներին, ըստ մեծի մասին չքաւորներ, յաճախել մի դպրոց, յարմարեցված առողջապահական և մանկավարժական պահանջներին։ Այդ կենացի առիթով խօսեց և Հ. Առաքելեան, բնաբան ունենալով այն գաղափարը, թէ իսկական և լաւ մարդասէրը նա է, ով իսկական և լաւ ազգասէր կամ հայրենասէր է. ով չէ սիրում իր սեփական ընտանիքը, նա չէ կարող սիրել իր քաղաքը, իր ժողովուրդը, իր ազգը. ով չէ սիրում իր սեփական հայրենիքը, ժողովուրդը, ազգը, նա չէ կարող սիրել համայն մարդկութիւնը։ Թէոդորոս Խաչիեան իր ներկայ համեստ, բայց անպայման օգտակար և ազգասէր, ժողովրդասէր գործով ապացուցանում է, թէ նա կարող է և մարդասիրական գործեր կատարել։ Անկասկած, այդ համեստ և բարի մարդը կանգ չի առնի իր առաջին քայլի վրա և աւերված, աղքատացած, աղէտի ենթարկված Շուշին դեռ առիթ կունենայ իր զաւակի նոր բարերար գործերը տեսնելու։

Երկրորդ բաժակը քաղաքագլուխը առաջարկեց պատուաւոր հիւր, և Շուշու զաւակ Հ. Առաքելեանի կենացը, որ ընդունվեց մեծ ոգևորութեամբ և առիթ տուեց ճառախօսութիւնների՝ դրուատող իր՝ Հ. Առաքելեանի և «Մշակի» գործունէութիւնը։ Խօսեցին այդ առիթով քաղաքագլուխը, Խորէն ք. Իսկէնդերեան, Լեւոն Շաքարեան, Ա. Մանկասարեան, արտայայտելով միևնոյն ժամանակ ցանկութիւն, որ «Մշակը» աւելի շատ և յաճախ զբաղվէ Շուշուն և Ղարաբաղին վերաբերեալ հարցերով։ Ապա խմվեցին ծխ. հոգաբարձութեան, երէցփոխ Մանկասարեանի և ծխատէր քահանայ Իսկէնդերեանի կենացները, որոնք և յղացել էին այդ գեղեցիկ միտքը՝ դիմելու պ. Թ. Խաչիեանին և խնդրելու աջակցութիւն իրանց ծխական դպրոցի համար։

Համեստ ճաշկերոյթը անցաւ շատ ուրախ և վերջացաւ ժամը 5-ին։

Բարերար Թ. Խաչիեան, մի համեստ և բարի հայ, շնորհակալութիւն յայտնելով արտայայտված զգացումների համար, յայտնեց, որ իր արածը ոչ թէ մի բարերարութիւն է, այլ մի պարտականութիւն, որ ամեն մի շուշեցի պարտաւոր է կատարել իր հայրենիքի վերաբերմամբ։ Ա. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հոկտ. 5-ի երեկոյեան Մուղանի դաշտը մեկնեց Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին բամբակի ցանքսերը դիտելու համար։ Սենատորին ուղեկցում է երկր. գլխաւոր կառավարչի կովկասեան լիազոր Արխիպովը։

◆ Ալ. Քալանթար վերադարձաւ Մոսկվայից։ Իր դիտողութիւնների մասին Մոսկվայի ոչխարաբուծական ցուցահանդէսին և համագումարին վերաբերեալ Ա. Քալանթար մօտ օրերս զեկուցում կը կարդայ Կայսերական Կովկ. Գիւղատնտ. Ընկ. և Հայ Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկ. նիստերից մէկում։

◆ Վաղվանից սկսվում են Հայոց Դրամատիքական Ընկերութեան ներկայացումները Արտիստական Թատրոնում։ Այս թատրոնական սէզօնին հայ դերասանների գերդաստանը բաժանվել է երկու խոշոր մասի, որոնցից մինը տ. Սիրանոյշի ղեկավարութեամբ, ինչպէս յայտնի է, մշտական գործունէութիւն ունի Բագւում։ Մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ որ աստիճան այդ հանգամանքը կազդէ գործի վրա։ Իսկ այսօր մենք աջողութիւն ենք ցանկանում Թիֆլիսում մնացած դերասանական խմբին, որ գործելու է Աբէլեանի և Արմէնեանի նման փորձված րեժիսօրների ղեկավարութեան ներքոյ։

◆ Առաջիկայ ուրբաթ, հոկտ. 12-ին, Գրական-Գեղագիտական Սալօնի 12-րդ տարեշրջանի հանդիսաւոր բացումն է։ Երեկոյթը՝ նախատօնակ 1500 ամեայ հայ տառի և 400-ամեայ հայ տպագրութեան։ Կասկած չը կայ, որ Տ. Նազարեանի անսպառ եռանդը կերեւայ նաև այս տարի Գեղագիտական Սալօնում պարբերական երեկոյթներ կազմելու մէջ, որից Թիֆլիսի գրական, ուսուցչական և առհասարակ ինտելիգենտ դասակարգերը կը ստանան այն գեղեցիկ տպաւորութիւնը, որ ամեն անգամ եղել է անցեալում յիշեալ երեկոյթների ժամանակ։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի վերջին նիստում քննվեց նաև վարչութեան զեկուցագիրը 5-րդ անդամի պաշտօն հաստատելու մասին։ Զեկուցագիրը առաջ բերեց երկար վիճաբանութիւն։ Վերջում դուման ձայների ահագին մեծամասնութեամբ վարչութեան առաջարկութիւնը մերժեց։

◆ Թիֆլիսում երկրաշարժից յետոյ հանքային բաղանիքների ջուրը զգալի չափով առատացել է։

◆ Հոկտ. 4-ին ժանդարմական ոստիկանութիւնը խուզարկեց քաղաքային դումայի ձայնաւոր Մինէեվի բնակարանը և իրան էլ ձերբակալեց։ Սակայն հետևեալ օրը Մինէեվը ազատ արձակվեց։

◆ Թիֆլիսի նահանգապետն առաջարկեց քաղաքային վարչութեանը հեռացնել պաշտօնից իւրիսկօնսուլտի օգնական Ջափարիձէին։

◆ «Տարազի» և «Աղբիւրի» հերթական համարները, որ լոյս պիտի տեսնեն ներկայ հոկտեմբերի 12-ին, ամբողջովին նուիրվում են հայ տառերի և տպագրութեան յոբելեանին։ Բոլոր նկարները, ծաղկազարդերը վերցված են Էջմիածնի Թանգարանի հին ձեռագիրներից, որ լուսանկարել է հայր Գարեգին վարդապետը և յատուկ «Տարազի» համար պատրաստել պատշաճ յօդուած։ Հ. Բարգէն վարդապետը, նոյնպէս յատկապէս «Տարազի» համար, նկարել է Վեհափառ Կաթողիկոս Գէորգ V ի պատկերը Օշականում, շրջապատված իր շքախմբով և ժողովրդով. Մեսրոպի եկեղեցին, Օշականի ընդհանուր տեսարանը և այլն։ Այս պատկերների պատճէնները Տիգրան Նազարեան ուղարկեց արդէն Եւրոպա և միջազգային մամուլի դաշնակցութիւններին, հաղորդելով Էջմիածնի կենտր. յանձնաժողովի որոշումը, Կաթողիկոսից հաստատված, որ հայ տառերի և տպագրութեան յոբելեանը սկսվում է ներկայ հոկտ. 13-ից և կը կատարվի ամենուրեք այդ օրը, իսկ հետևեալ տարի կը փակվի մեծ շուքով և կը հրաւիրվեն ականաւոր գրականագէտներ, հնագէտներ, լեզուագէտներ, հրապարակախօսներ մասնակցելու համազգային տօնախմբութեան և այս առիթով Էջմիածնում կայանալիք կոնգրէսին։

◆ «Зак.»-ի ասելով վրաց գրասիրաց ընկերութեան վարչութեան նիստում որոշվել է հանգուցեալ Իլիա Ճավճավաձէի մահարձանը բանալ բանաստեղծի ծննդեան 75-ամեակի օրը, այսինքն այս տարւայ 27-ին։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարի (№ 221) առաջնորդողում մի սխալ է սպրդել։ Յօդուածի նախավերջին պարբերութեան մէջ «ետ տեղանայ» բառը պիտի լինի «ետեղայնանայ» (լօկալիզացիա)։

ՄԱՄՈՒԼ

Ռուսական առածը թէ՝ «горбатаго могила исправитъ» (կուզին գերեզմանը կուղղէ), ամեն րոպէ արդարանում է մեր կեանքի մէջ։

Այն րոպէին, երբ Թիւրքահայաստանը սոսկալի աղէտի մէջ է, երբ ամեն րոպէ ընդհանուր ջարդի վտանգը դամոկլեան սրի պէս կախված է թշուառ հայ ժողովրդի գլխին, երբ այդ ժողովուրդը, մանաւանդ գիւղական, աշխատաւոր ժողովուրդը, զարհուրած, սարսափած, իր աչքերը յառել է քրիստոնեայ պետութիւնների և մանաւանդ Ռուսաստանի վրա. այն րոպէին, երբ օտար երկիրների հայերը դիմումներ են անում հայոց Կաթողիկոսին և հայցում, որ նա դիմէ ռուսական պետութեան և նրա պաշտպանութիւնը խնդրէ հայերի համար—այդպիսի մի կրիտիկական րոպէին «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութիւնը, որ մի կատարեալ պատուհաս է դարձել հայ ազգի համար, յարմար է գտնում ճառեր արտասանել Կ. Պոլսում ռուսական բռնապետութեան և դեսպոտիզմի դէմ։

Ահա ինչ է գրում «Новое Время» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը (28 սեպտ. № 13128)։

Նկարագրելով, որ սեպտեմբերի 21-ին տեղի ունեցաւ Ստամբուլում մի մօնստր-միտինգ, որին մասնակցում էին մօտ 25 հազար հոգի, թղթակիցը ասում է.

«Զանազան կուսակցութիւնների և ազգութիւնների լիդէրները արտասանեցին բազմաթիւ բոցբոցիչ ճառեր, որոնց մէջ ժողովրդի պատրաստակամութիւնն էր յայտնվում զոհել կեանքը և գոյքը ի պաշտպանութիւն հայրենիքի պատւի և հողի անձեռնմխելիութեան։ Մի հայ ճառախօս, դաշնակցական, Փաշայեան անունով, չը զլացաւ շահագործել և ներկայ, ոչ շատ յարմար դէպքը՝ թշնամական վերաբերմունք ցոյց տալու հանդէպ Ռուսաստանի, անտեղի կերպով խօսելով ռուսական բռնապետութեան եւ դեսպոտիզմի մասին...»։

Մեզ կարող են ասել, թէ «Новое Время» թերթին, իբրև հայատեաց թերթի, հաւատ չէ կարելի ընծայել, և նրա թղթակիցը գուցէ սխալ տեղեկութիւն է հաղորդում։ Դժբաղդաբար, դաշնակցական ճառախօսի անուան յիշատակութիւնը կասկած չեն թողնում լուրի ճշգութեան մասին, որ բացի դրանից հաստատվում է նաև այլ աղբիւրներից։

Ռուսաստանի բռնակալութեան մասին խօսող դաշնակցական հռետորը դոքտոր Փաշայեանն է, պարսկական խան, որ վերջերս, դաշնակցականների շնորհիւ, ընտրվեց Սեբաստիայի կողմից օսմանեան պարլամենտի անդամ։ Ահա այդ հայ պատգամաւորը, որ, շնորհիւ երիտասարդ-թիւրքերի, ստանում էր ամսական 50 ոսկի ռոճիկ, փոխանակ խօսելու «Իթթիհադի» դէմ, որ կազմակերպել է Հայաստանի ջարդերը, խօսում է Ռուսաստանի բռնութեան դէմ մի այնպիսի րոպէում, երբ թշուառ հայ ժողովուրդը այնքան պէտք ունի այդ պետութեան օգնութեան։ Ինչ հոգ Փաշայեան խանի համար, եթէ հայ ժողովուրդը կոտորվում է. բաւական է, որ ինքը չը զրկվի իր 50 ոսկիներից։

Մեզ երբեմն մեղադրում են, թէ շատ ենք զբաղվում դաշնակցականներով։ Հարցնում ենք մեզ մեղադրողներին. հնարաւորութիւն կա՞յ լռութեան տալու այդպիսի դէպքերը. իրաւունք ունենք չը խարանել, չը մերկացնել այդպիսի վարմունքը՞

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 30 սեպտ.

«Մշակի» № 213-ի մէջ Շուշուց հաղորդած տեղեկութիւնը, թէ տեղիս րէալական դպրոցում կրճատված է հայերէնը՝ թիւրիմացութիւն է։

Շուշու րէալական դպրոցի բոլոր դասարաններում ըստ առաջնոյն դասաւանդվում է հայերէն լեզուն և բոլոր հայ աշակերտները առանց բացառութեան առանձին հետաքրքրութեամբ սովորում են հայերէն։ Թիւրիմացութիւնը առաջ է եկել այն հանգամանքից, որ դասացուցակը պատրաստ չը լինելով՝ հայերէնի դասերը աշակերտներին յայտարարվել է ուսումն սկսվելուց մի քանի օր յետոյ։

Շուշու րէալակ. դպր. հայերէնի ուսուցիչ՝
Եղիշէ քահ. Թարխանեանց

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲՈՒԺԱՐԱՆ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով
ՓՈԽԱԴՐՎԵԼ Է ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ
Միխայլովսկի պր. № 49, և անկիւն Բէլուտովսկի փողոցի № 2. Տելէֆօն № 10—26.
Հիւանդների ընդունելութիւն.
Աղաջանեան Միխայէլ.—միզասեռ., սիֆիլիս և կաշուի հիւ., ժ. 11—12-ը։
Վնուկով Վ. Վ.—խիրուրգ. հիւ., ժ. 1—2-ը։
Եղիազարեան Ի. Ն.—ներքին, ջղային և հոգեկան հիւ., էլեկտրօթէրապիա, ժ. 11—12-ը։
Ելչիեվ Մ. Բ.—ականջի, քթի և կոկորդի հիւ., ժ. 12—1-ը։
Կիմօնս Մ. Պ.—խիրուրգ. հիւ., ժ. 11—12-ը։
Մաղաքեան Գ. Ն.—ներքին և երեխ. հիւ., առանձնապէս որովայնա-աղիքային, ժ. $11\frac{1}{2}$—$12\frac{1}{2}$-ը։
Շամաօ Ի. Ի.—խիրուրգ. հիւ., ժ. 12—1-ը։
Բուժարանում կատարվում է էլեկտր. բժշկութիւն և մասսաժ։ Միկրօսկօպ., բակտէրիօլօգ. և քիմիակ. հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումն։ Սանդուխեբի քննութիւն։ Խորհրդի վճարը 50 կոպ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր պալատից և թէ առանձին նոմէրներից։
ՍՐՍԿՈՒՄՆ «914»-ի և «606»-ի։
(ե. հ. կ.) 706. 100—7

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունելութիւնը ($12\frac{1}{2}$—2 ժ. ցերեկվայ։
(5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33 (անկիւն Պասկևիչի փողոցի)։ Տելէֆօն № 1175.
(ա.օ.) 377. 100—22

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
1. „Великіе праздники армянскаго народа", գինը 5 կոպ.:
2. „Армяно-Григоріанскій календарь на 1913 годъ", գինը 20 կ.:
Դիմել՝ Ставрополь губ. Свящ. С. Теръ-Ованнесьянцъ.
(օ.մ.) 751. 3—1

Учредителя Бухгалтерскихъ Курсовъ
Н. В. Абраамяна,
вышли изъ печати и поступили въ продажу:
I
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинов. производствомъ (2 изд. допол. и исправл.) Ц. 2 р. 50 к.
II
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ $\frac{1}{4}$ до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.
III
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ (2 изд.) Ц. 30 к.
IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.
V
Առեւտրական հաշւապահութիւն
(հայերէն)
երկաթ., բանկ., կօլօնիալ և բամբակէ առևտրի վերաբերեալ։
Այս վերջին գիրքը լոյս կը տեսնի սեպտեմբ. վերջերին։ Նրանք, ովքեր կը կամենան ունենալ այս գիրքը, պէտք է վաղօրօք բաժանորդագրվեն։
Յիշեալ հրատարակութիւնների պահեստ Թիֆլիսում, հեղինակի մօտ, Նիկօլայեվսկայա փող. № 22.
(հ.կ.) 663. 10—9

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ"
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցված է սրվակին։ Իսկականը մետաղեայ սրվակներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(կ.) (II. 23620) 52 38

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ.
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և ուղարկվեց բոլոր բաժանորդներին
ՀԱՆՐԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 3 գիրքը՝
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
«ԱՍՏԾՈՒ ԿՐԱԿԸ»
Հատով գինն է 15 կ.։ Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին և Ընկ. գաւառական աշխատակից անդամներին ու գործակալներին։ Պահեստը Ընկերութեան մօտ։ Դիմել՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское О-во. Бебутовская 25.
(ե.) 753. 2—1

ՀՐԱՒԷՐ
Կիրակի, ամսիս 7-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ս. Կարապետ եկեղեցում նշանակված է ծխականների երկրորդ և վերջին ժողով՝ ընտրելու երէցփոխ. ուստի հրաւիրում եմ նոյն եկեղեցու բոլոր չափահաս ծխականներին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։ Ընտրութիւնը կը կատարվի՝ անկախ ներկայ եղող ծխականների թւից։
Գործակալ՝ Ղևոնդ ք. Սամիկոնեան
749. 1—1

Ց. Դաղբաշեանի
ՌՈՒՍԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ, յարմարեցրած հայ ուսումնարանների կեանքին և ծրագրին, Ա. տարի՝ գինը 25 կոպ., Բ. տարի՝ գինը 40 կոպ.։
ՌՈՒՍ-ՀԱՅ լիակատար բառարան գինը 8 ռուբ., կազմած 9 ռ.։
ՀԱՅ-ՌՈՒՍ լիակատար բառարան, գինը 6 ռուբ., կազմած 6 ռ. 50 կ.։
Գումարով գնողներին զեղչ։
Բաժանորդագրութիւն Ռուս-Հայ ամենեան բառարանի 2 ր. 50 կ.։
Հանրագիտական բառարանի՝ 8 ր.։
Դիմել՝ А. Дагбашяну. Въ Тифлисъ. Головинскій пр. 12.
(չ. ու. կ.) 717. 9—8

ЭЛЕКТР. ЭКОНОМН.
ЛАМПОЧКИ

METEOR
МЕТЕОРЪ
МЕТЕОРЪ

«Մէտէօր» ճրագները ճանաչված են ամենալաւը։
Տնտեսութիւն—75% տօկի սպառման մէջ։
Ամրութիւն—ապահով ցնցումներից։
Տեւականութիւն—3000 ժամ լուսաւորութիւն։
Ներկայացուցիչ Կովկասում և ֆաբրիկային պահեստ Արմենակ Ձահրատով և Ընկ., Թիֆլիս, Վելիամինովսկայա փ., № 4. Տելէֆօն № 12—15.
Գրասենեակը ընդունում է էլեկտրական լուսաւորութեան, զանգակների, ազդանշանների սարքաւորումն։ Գրասենեակն ունի ամեն տեսակ նիւթեղէններ էլեկտրական կառուցումներին վերաբերեալ։
(կ.) 703. 25—3

Եղբ. Աւսարգիսովների
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգներն ուղարկվում են ՁՐԻ։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.
(ե.հ.կ.) 739. 10—2

Լոյս տեսաւ
Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ
„ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ"
ՎԷՊ.
ԳԻՆԸ 40 ԿՈՊ.
Դիմել հեղինակին, Тифлисъ, Ремесленное училище, Акиму Соловьянцу.
—о—
Թիֆլիսի գրախանութներում գտնվում է նոյն հեղինակի՝
1) «Հայ քնարերգութեան փիլիսոփայութիւնը». . . . . . 50 կ.
2) «Ես տիկին ունեմ» (մանկ.) 10 կ.
Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։
Միւս գրուածքները սպառված են։
(հ.կ.) 674. 10—9

Մի ուսուցչուհի,
որ ունի հայոց միջնակարգ դպրոցի կրթութիւն, կարուձևի վկայական, ձեռագործի հմտութիւն և հնգամեայ փորձառութիւն, պաշտօն է որոնում հայոց դպրոցներում։
Հասցէն՝ Эривань, А. А. Сараджянцу.
(կ.) 743. 2—2

Ներկայ հոկտեմբեր ամսի 1-ից Պուշկինսկայա փողոցում № 29 Դոլուխանեանի շինութեան մէջ, քաղաքի կենտրոնում,
ԲԱՑԵԼ ԵՄ ԵՒՐՈՊԱ ՀԻՒՐԱՆՈՑ,
բաղկացած բոլորովին մաքուր՝ նոր կահկարասիքով կահաւորված համարներից։ Էլեկտրական լուսաւորութիւն, վաննա, դուշ։ Գները չափազանց մատչելի են։
Խորին յարգանօք՝ Կ. Խաչիկեանց
(հ. կ.) 748. 10—1

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլովսկի պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են րէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենալաւ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և արվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
(ե. հ. կ.) 555. 0—27 Տ. ՓԻԼՕՍԵԱՆ

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժենէր Ի. Ս. Պօնդոյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելէֆօն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւնի, կաթսայի, րիֆլէնոյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍՖԱԼՏ սըզրանեան։ ԳՈՒԴՐՈՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուչ ԱՂԻՒՍ, ԿՂՄԻՆՏՐ մարսէյլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփակ. գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(չ.ու.կ) 617. 50—20

Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մեթոդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ճշտապահական Դասընթացներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները. կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլովսկի պր. № 24—4.
(ա.օ.) 643. 0—28

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный